

ԱՅՎԱԶՅԱՆ ԱՂԱՍԻ

ՇՈՒՇԱՆԸ

Նվիրում եմ հայ կանանց

Ութ տարեկան էր Շուշիկը, իսկ կարմիր կովը, որի վրա նստած էր նա, շատ ավելի փոքր էր: Եվ երջանիկ էր Շուշիկը: Դժվար էր Հայոց լեռներում երջանկություն գտնելը... Հայի երջանկությունը լեռ ու ձոր էր ընկել, սողոսկել էր կիրճերը, թաքնվել էր շատ տեղերում, ելք ու մուտք էր փնտրել հարազատ վայրերում՝ գիտենալով, որ այս բոլորը իրենը չէ այլևս, եւ վերջապես բնավորվել էր երկու քարաշատ լեռների արանքում, նեղ մի ձորակում, ինքն իր համար, աշխարհից հեռու, Շուշիկի աչքերում, կովի վագրում, կողքից թռչկոտող աղջնակի եղբոր՝ Թորոսի ծղրտոցի մեջ:

Հայոց երջանկությունը ծպտյալ, գաղտագողի մտել էր Մեծ Հայքի ձորերը, որոնք-գտել էր մի փոքրիկ գյուղակ՝ մի քանի տնակներով, ծանծաղ գետակով, համեստ եկեղեցիով, ու ծվարել արանքում... Նա արեւի հետ նստել էր եկեղեցու կիսավեր գմբեթին, եւ թեպետ գմբեթը խաչ չուներ, սակայն հնչում էին նրա զանգերը՝ համակայելով Շուշիկի ուրախ կարկաչանքի հետ:

Հայոց երջանկությունը լեռան լանջից իջեցրեց կովը հեծնած մանուկների խումբը, մոտեցրեց փոսորակում գտնվող խրճիթին, որի առջեւ ճախարակի վրա բուրդ էր մանում Շուշիկի քույրը՝ մանկամարդ Մանեն, մտցրեց խրճիթ, որտեղ թոնրի մոտ հաց էր թխում Շուշիկի ավագ քույրը՝ Գայանեն, օրորոցն օրորելով քնեցնում էր մանկանը մայրը՝ եղիսաբեթը, սեղանի տակ գնդոլթում էին երկու մերկ տղա-երեխա, մի անկյունում շվի էր տաշում մյուս եղբայրը՝ Թորոսը, խնոցի էին հարում քույրերը... Քույրե՛րը, քույրե՛րը, եղբայրնե՛րը, եղբայրնե՛րը, մա՛յրը, մա՛յրը...

Հայոց երջանկությունը բացեց խրճիթի դուռը եւ նրա շեմին կանգնեցրեց Շուշիկի հորը՝ Հակոբին, հո՛րը, հո՛րը, հո՛րը... Շուշիկը վագեց հոր մոտ, փաթաթվեց հոր ծնկներին, հետո նրա ձեռքերի կոշտ ու տաք ափերի մեջ բարձրացավ մինչեւ կզակը, ապա այտերը ու զգաց հոր շուրթերն ու պարուրվեց հոր շնչառությամբ...

Հայոց երջանկությունը նապաստակ հանեց հոր ծոցից ու սվեց Շուշիկին, Թորոսի ձեռքով նրա տաշած շվին սվեց Շուշիկին, Նանեի ձեռքով նրա գործած գուլպաները հագցրեց Շուշիկի ոտքերին, Գայանեի ձեռամբ ցորենի հասկերից հյուսած եւ հատապտուղներով զարդարված պսակը դրեց Շուշիկի գլխին...

Հայոց երջանկությունը այդ օրը նշեց Շուշիկի ութ տարին: Ընտանիք էր անումը հայոց երջանկության:

Հայոց երջանկությունը տնանկ էր ու շռայլ... Նրա ժամանակի ընթացքը կտործում էր, հարթությունները կարճ էին, խոչուխութերը՝ անհամար: 1915 թվականը նրա տարիներից մեկն էր: Նա անգամ այս կորած-մոլորված տեղանքում մարեց, մոխրացավ գյուղակի, Շուշիկի ընտանիքի հետ:

Շուշիկը մնաց մենակ... Չորսդին պարապուտ էր, մութ, ավերակներ, դիակներ, վերացավ ամեն ինչ, ավերվեց գյուղակը, մոխրացավ տնակը, ոչնչացավ ընտանիքը, միայն պսակն էր մնացել Շուշիկի ձեռքին...

Նրա փոքրիկ կերպարանքը ուղղվեց աջ, ապա կանգնեց, շուրջը դիտեց, հետո գնաց հակառակ կողմը... Ո՞ւր... Ինչպե՞ս...

Հեռվից ինչ-որ անհասկանալի, բայց չարագուշակ ձայներ լսվեցին: Շուշիկը կուչ եկավ, հետո չոքեց, դեմքը հպեց գետնին, ասես այնտեղ ապաստան կար, փրկություն կար... Բայց փակ կոպերի տակ մութը հանդարտ էր, բարեհամբույր, դրսի խավարից ավելի տանելի... Եվ թվում էր, որ հայրը հիմա կարթնացնի նրան ու կվերցնի ձեռքերի վրա, կմոտեցնի իր կզակին, իր այտերին, եւ Շուշիկին կպարուրի հոր շնչառությունը... Եվ որոշեց աչքերը չբանալ, մինչեւ հայրը չվերցնի նրան ձեռքերի վրա... Շուշիկն այդպես մնաց երկար ժամանակ, մինչեւ հոր ձեռքերը չբարձրացրին նրան: «Հայրը»... քուրդ պատանի էր, որն իր բռի մեջ առնելով Շուշիկի գլուխը՝ այս ու այն կողմ դարձրեց եւ ժպտաց... Ժպիտը գնա՛ց, գնա՛ց, հեռացավ, լուծվեց մթի մեջ... Հետո Շուշիկի թեւատակերից բռնելով՝ բարձրացրեց ձիու վրա, ինքն էլ ելավ երիվարի գավակին...

Որ հիմա, այս մութ պարապուտում տուն կար՝ Շուշիկին զարմացրեց: Բայց տունը իրենց տանը նման չէր: Երկար, տամուկ միջանցքին հաջորդեց գորգերով պատած սենյակ, որի պատի տակ նստած տարեց քուրդը սկզբում որպես գորգի նախշ երեւաց:

Շուշիկին տեսնելով՝ տարեց քուրդը աշխուժացավ. Շուշիկը նրա առաջին զոհն էր՝ նոր-նոր իրականացող իր հարեմի համար: (Շեյխը աղքատներից էր եւ նոր-նոր էր իրեն դրսեւորում. ժամանակն էր նպաստում. վերցրո՛ւ... Վերցնելու բան կա): Նա մի տեսակ տղայավարի, չտեսի նման բարձրացավ տեղից, մոտեցավ Շուշիկին եւ տնողեց ամեն կողմից.

- Լավն է... - ասաց նա քրդերեն. Շուշիկը քրդերեն հասկանում էր, սակայն բովանդակությունը նրա տարիքի համար չէր.

- Հա՛... շեյխ,- համաձայնեց Շուշիկի երիտասարդ ուղեկիցը:

- Հա՞յ է... - հարցրեց շեյխը:

- Ուրիշ ի՞նչ կարող է լինել... - ասաց տղան՝ գոհունակությամբ նայելով Շուշիկին:

- Հույն... բուլղարացի... ասորի...

- Չէ, հայ է:

Ետեւից մոտեցավ շեյխի կինը:

- Երեխա է... Ի՞նչ պիտի անես... - ասաց նա շեյխին:

- Երեխա է՝ կմեծանա... Քու խելքի բանը չի...

Շեյխի տանը մի ուրիշ սենյակ կար, որն ավելի խորդանոց էր հիշեցնում, քանի որ սենյակը ծանրաբեռնված էր իրերով. ինչ ասես չկար այստեղ խուրջիներ, սինիներ, խնոցիներ, ճախարակներ... Շուշիկին թվաց, թե իրենց տան իրերն են... Հայկականը իր ամբողջ էությամբ էր զգում Շուշիկը: Շեյխի կինը Շուշիկին տարավ այդ սենյակը եւ տեղավորեց հնամաշ թախտի կողքին: Շուշիկը կամաց-կամաց շարժվելով՝ ընտրեց սենյակի անկյունը եւ հատակին կուչ եկավ:

Շեյխի կինը մի պատռո հաց եւ պանիր մոտեցրեց Շուշիկին: Շուշիկը նայեց հացին, եւ նրա ուղեղում առկայծեցին իր տան պատկերները...

Թոնիրը, քրոջ երջանիկ դեմքը...

Հայրը մտնում է տուն...

Եղբայրը շվի է նվագում...

Ինքը, կարմիր կովի գավակին, մտնում է տուն...

Դռան շեմին հայրն է...

Օրորոցի մոտ՝ մայրը...

Խնոցու երկու կողմերում՝ քույրերը...

Հայրը, մայրը, քույրերը, եղբայրները...

- Կեր, թե չէ կմեռնես... - ասաց շեյխի կինը երկրորդ օրը հայերեն:

Շուշիկը նայեց հացին, եւ հայացքը հացի պատկերով սառեց, ինչպես սառցակալում էր եղեւնու պատկերով իրենց պատուհանը ձմռանը:

- Կեր, - նայելով նրա փայլատ աչքերին՝ կրկնեց կինը, - թե չէ շեյխը զոռով կուտեցնի... Դա անհամ կեղնի... Քթից կգա:

Առաստաղի տակ փոքրիկ անցք կար, որը լուսամուտի դեր էր կատարում, եւ երբ օրը մթնում էր, մութը անցքի միջից առարկայորեն թափանցում էր ներս, սորսորում հատակով, մոտենում Շուշիկին ու ներթափում նրան իր մեջ... Վեց անգամ այդպես մութը առարկայացավ ու այնքան ամուր իր գիրկն առավ Շուշիկին, որ չթողեց աղջնակի դիրքը փոխվի: Յոթերորդ առավուտը անզոր եղավ տեղից շարժել Շուշիկին:

Շեյխը վերցրեց Շուշիկի արծանացած, ասես անկենդան դեմքն ու այս ու այն կողմ դարձրեց:

- Չէ... Սրանից հարեմի ապրանք դուրս չի գա... Ռահմարեք՝ թող գնա... - ասաց շեյխը եւ աղջնակի գլուխը զգույշ պատին հենեց՝ վախենալով, որ իր ձեռքերի մեջ չմնա կոտրած սափորի կոնքի նման:

- Ո՞ւր... - տարակուսեց կինը:

- Մենակ կկորչի... - ասաց Շուշիկին բերող՝ շեյխի տղեկը:

- Թող կորչի, մենակ թե մեր աչքից հեռու...- ասաց շեյխը: - Ի՞նչ էիր մտածում, որ բերում էիր:

- Սիրում էր... - արդարացավ տղան: - Մենակ էր...

- Մեր գործը չի իր մենակությունը... Տար, ոնց որ բերեցիր...

Դրեցին Շուշիկին ձիու մեջքին, տղան առաջ ընկավ՝ գրաստի սանձը ձեռքին, եւ քայլեց կաշկառ արահետով: «Որտե՞ղ թողնել կիսամեռ այս փոքրիկին». քուրդ պատանու սիրտը դեռ չէր հասցրել այնքան քարանալ, որ կարող լիներ անսել ուղեղի որոշմանը: Նա աջ ու ձախ որոնում էր հարմար տեղ, որ գոնե իր աչքը վկա չդառնա ու չճնշի հետագայում իր սրտին: Չափազանց ամայի ու անհարմար էր տեղանքը՝ փոքրիկ աղջնակին անտերության մատնելու համար: Եվ շարունակում էր գնալ ու ինքն իրեն փնթփնթալ:

«Քեզ ով ասաց, որ հայ ծնվես... Եսքան սիրո՞ւն... Եսքան հայ... Եսքան սիրո՞ւն... Եսքան պուճո՞ւր... Եսքան հայ... Եսքան մենակ... Եսքան մենակ... Եսքան մենակ»...

Վերջապես նա կանգնեց մի ժայռաբեկորի մոտ, որի տակը նեղլիկ քարայր կար, իջեցրեց Շուշիկի մարմինը ձիու գավակից, դրեց խորքով եւ առանց ետ նայելու հեռացավ...

Նույն ճանապարհով, իր չորս կողմը դիտելով-տնտղելով, թեթևաքայլ շարժվում էր մկան նման մի փոքրամարմին անձնավորություն՝ իր ետեւից քարշ տալով ավանակի: Ինչ էր փնտրում՝ դժվար էր կռահել, բայց որ անտարբեր չէր

շրջապատի նկատմամբ՝ ակնհայտ էր: Նա մոտեցավ քարայրի պոնկին եւ ներս նայեց: Կիսախավարի մեջ հագիվ էր նշարվում Շուշիկի մարմինը: Սկան նման անձնավորությունը զգուշավոր դիտեց իր աջ ու ձախ կողմերը, ապա շրջահայաց մտավ քարայրը: Նա ձեռքը անհամարձակ տարավ դեպի աղջնակը, շոշափեց նրա դեմքը, հետո ստուգեց զարկերակը, եւ գոհունակությունը թառեց նրա դեմքին. աղջնակը կենդանի էր, եւ դա նրան պետք էր: Նա դժվարությամբ բարձրացրեց Շուշիկի մարմինը եւ, բռնելով նրա երկու դաստակը, քարշ տալով դուրս բերեց քարայրից: Եթե ձիավոր լիներ մկան նման մարդը, դժվար թե կարողանար աղջնակի մարմինը բարձրացնել գրաստի վրա: Սակայն ավանակավոր էր նա եւ աղջնակին խուրջինի հանգույն բռնավորեց իշուկի մեջքին: Ճանապարհի մի մասում նա շեղվեց դեպի անտառից խռոված-որբացած մի քանի ծառը, որոնց արանքից արահետ էր սկիզբ առնում եւ, շարունակվելով, մտնում անտառ: Անտառում մկան նման մարդը գտավ իր ուզած վայրը. դա գետնահյուղ էր՝ փշաթփերի մեջ: Զգուշավոր շուրջը նայելով՝ ծածկագիր նշանով թակեց գետնահյուղի դուռը: Դռան նման անցքի մեջ հայտնվեց ռուսական մտավորականի կերպարանքով, պենսնեն քթին, տարեց մի կին: Նա եւս շուրջը տնտղելուց հետո մոտեցավ իշուկի վրա կապված Շուշիկին:

- Հայ է... - ասաց մկի նման մարդը թուրքերեն:

- Տեսնում եմ,- ասաց կինը, ինքը քակեց կապերը, իշուկի վրայից իր գիրկն առավ Շուշիկի մարմինը եւ ներս տարավ գետնահյուղ:

Գետնահյուղում ավելի երիտասարդ կին կար:

- Վիճակը վատ է... Ծանր դեպք է... - ասաց պենսնեով կինն ընկերուհուն հայերեն:

- Չէի՞ր կարող մի փոքր զգույշ վարվել երեխայի հետ,- հանդիմանեց երիտասարդ կինը թուրքին հայերեն:

Թուրքը չհասկացավ նրա խոսքը եւ հարցական նայեց պենսնեով կնոջը:

- Պետք էր լավ վերաբերվեիր երեխային, - թուրքերենով բացատրեց պենսնեովը:

- Մեղք չունեմ, խանըմ... - արդարացավ իշատերը: - Եթե ես չգտնեի աղջկան, հոգին կավանդեր... Դժվար գործ եմ արել:

- Վերցրո՛ւ, - մեկնելով մի ոսկեդրամ՝ արտաբերեց տարեց կինը: - Եվ մյուս անգամ ավելի մարդավարի բեր:

- Մյուս անգամը չի լինի, խանըմ, եթե էսպես գնահատես աշխատանքս,- մատների արանքում պտտեցնելով ոսկեդրամը՝ դժգոհեց մկան նման մարդը:

- Ի՞նչ է ուզում... - նայելով թուրքին՝ իր ընկերուհուն դիմեց ավելի անհանդուրժող երիտասարդ կինը:

- Ասում է՝ քիչ է:

- Ինչո՞ւ... - տարակուսեց երիտասարդը,- մեր պայմանը մեկ ոսկի չէ՞:

- Մեկ ոսկի՝ մի երեխայի դիմաց, - թուրքերեն ավելացրեց պենսնեովը:

- Դժվար է... Անհավատ փրկելու համար գլուխս կկտրեն... - ոտքից ոտք ընկնելով մռմռաց թուրքը:

- Տո՛ւր,- հայերեն ասաց պենսնեովը ընկերուհուն,- տո՛ւր... - եւ դառավ մկան նման մարդուն թուրքերենով. - Հայի արժեքն ավելի է... Վերցրո՛ւ...

Թուրքը վերցրեց երկրորդ ոսկեդրամը, քաղցրահայաց ժպտաց կանանց եւ գնաց դեպի ելքը, սակայն ետ նայեց ու մեղրաշուրթ կասկածամտությամբ դիմեց պենսնետով կնոջը, որն այլեւս զբաղված էր Շուշիկով.

- Խանըն, չէ՞ս ասի... Ի՞նչ եք անելու երեխայի հետ...

- Տանելու ենք ապահով տեղ... - ասաց պենսնետովը:

- Հաա՞... - նորեն կասկածամտորեն ժպտաց թուրքը: - Խանըն, ի՞նչ հաշիվ կա երեխաներ առնելու մեջ...

Պենսնետով կինը ուշացած նայեց նրան եւ՝

- Մե՛ծ... Շա՛տ մեծ...

- Հաա՞... - յուրովի եզրակացրեց թուրքը: - Ես էլի կբերեմ հայ երեխայի... Իմ հաշիվն էլ մի մոռացեք...

- Չենք մոռանա,- ժպիտի տակ կոշտություն տեղավորելով՝ արտաբերեց պենսնետովը:

Թուրքը, քթի տակ երգ մոմնալով, հեռացավ:

- Երեխան շատ է հյուժված... Երեւի մեկ շաբաթից ավելի սնունդ չի ունեցել,- Շուշիկի շուրթերը թրջելով՝ ասաց պենսնետով կինը:

Երիտասարդի աչքերը արցունքակալվեցին:

- Չի՛ կարելի, Անահիտ... Սա առաջինը չէ, եւ դու ամեն անգամ լաց ես լինում... - հանդիմանեց տարեցը՝ սրբելով Անահիտի արցունքները: - Այս վիճակում նրան Պետերբուրգի որբանոց հասցնել չենք կարողանա... Մնում է Ալեքսանդրապոլի Ամերիկյան որբանոցը...

Պետերբուրգի համալսարանի դասախոս Մարիա Արտաշեսովնա

Շահնազարյանն ու Երեւանի օրիորդաց ուսումնարանի շրջանավարտ Անահիտ Աբասյանը փոքրիկ Շուշիկին, մեկ մանչուկի եւ մի վեց-յոթ տարեկան աղջնակի հետ մեկտեղ, բերեցին-հասցրին Ալեքսանդրապոլ:

1918 թվականին Անահիտ Աբասյանը զոհվեց Կարսում՝ քաղաքը թուրքերի ձեռքն անցնելու ժամանակ, Մարիա Արտաշեսովնան իր մահկանացուն կնքեց Մոսկվայում, 1925-ին, երբ Շուշիկն արդեն տասնութ տարեկան էր, որբանոցից վաղուց դուրս էր եկել եւ աշխատում էր Լենինականի տրիկոտաժի ֆաբրիկայում:

Հայոց երջանկությունը միամիտ էր ու շիտակ, համառ էր ու համեստ, հայտնվում էր ամենամեղ տեղերում, ներշնչվող էր ու հավատավոր, համոզվում էր հեշտությամբ. նա Ստալինի պատկերը դրեց Արամի շոգեքարշի ճակատին, եւ կուսակցական շոգեմեքենավար Արամ Ռոստոմյանին ամեն օր շտապեցնում էր Շուշանի հետ տեսակցության: Հնոցի կրակը համապատասխանում էր մեքենավարի տրամադրությանը: Իսկ մեքենավարի օգնականը՝ Մուկուչը, առանց ջանք խնայելու քարածուխ էր ավելացնում հնոցի երախը:

Արամը շոգեքարշի պատուհանից դուրս նայեց. արդեն երեւաց Լենինականի ուրվագիծը... Արամը փութաջանեց... Սկսեց փոխել հագուստը. հանեց մրոտ խալաթը եւ փոխարենը ճերմակ վերնաշապիկը գլուխն անցկացրեց:

Օգնականը նայում էր նրան եւ ծիծաղում.

- Հայելու մեջ աշե՛լ ես...

- Ի՞նչ է... - ասաց Արամը եւ նայեց փոքրիկ հայելուն, որի մեջ իր մրոտ դեմքը ոչ մի կերպ չէր համապատասխանում սպիտակաթույր վերնաշապիկին:

Արամը թաշկինակով սրբեց դեմքը, սակայն մուրն ավելի տարածվեց դեմքին:

- Համբերիր... - ասաց Մուկուչը: - Կիջենք, մի լավ կլողնանք-կմաքրվինք, մարդու նման կդառնանք, ու հագիր ինչ կուզես:

- Ինձի հիմի՛ է պետք մարդու նման երեւալ... կհասկնա՞ս... Ինձ իմ ճակատագիրը դեմս պիտի գա... Ինչի՞ կժպտաս...

- Կհասկնամ... - շարունակում էր ժպտալ Մուկուչը, - ճակատագիրը... Հըմը իսպես մրոտ ավելի մարդու նման ենք: Ըշտը, կոմունիզմ կկառուցենք... Կոմունիզմն էլ մրոտների պահանջ ունի: Իսկ քու ճակատագրուհին քեզի մրի տակ էլ կտեսնի:

Գնացքը փնջացնելով մոտեցավ կառամատույցին, որտեղ հավաքված մարդկանց ետեւում, մի փոքր առանձին կանգնած էր Շուշանը:

Հայոց երջանկությունը հեռվում, ամբոխի մեջ գտնվող Շուշանի հագիվ նշմարվող կերպարանքի միջից Արամին առանձնացրեց-երեւցրեց նրա աչքերը... Ու նաեւ շոգեքարշի պատուհանից նայող Արամի հագիվ նշմարվող կերպարանքից առանձնացրեց-երեւցրեց Շուշանին նրա աչքերը...

Ոգեխառնության վարպետ էր Հայոց երջանկությունը... Նրան անգամ չխանգարեց Լենինականի դեպոյի անկյունում գտնվող հնացած, իր գործը վերջացրած-դուրս գրված վագոնի անհարմարությունը, որտեղ բնակվում էր Արամը եւ, որտեղ՝ «Դեպի կոմունիզմ՝ աշխատանքով», «Հնգամյակը՝ ճանապարհ դեպի սոցիալիզմ» պլակատների տակ նշանվում էին հարվածային մեքենավարն ու Շուշանը: Նեղվածքում ուսը ուսին սեղմեցին, թիկունքը թիկունքին Ալեքը, Սերգոն, Մուկուչը, Սիմոնը, էնկավեդեի Սաղաթելը, եւ նշանակություն տվեցին իրենց ընկերոջ՝ Արամի՝ ընտանիք ստեղծելու արարողությանը: Թեպետ ժամանակը աղքատ ու խեղճ էր, սակայն հեղափոխական, աշխատանքային ռոմանտիկան տրամադրել էր նրանց հանդիսավոր երեւալ. էրզրունցու, կարսեցու, լենինականցու տղամարդկությունը հաստատող ավանդական սեւ բլուզները շրջանակել էին ճերմակ չթե շորով Շուշանին:

Արամը բարձրացրեց բաժակը եւ.

- Ընկերներ՛, էսօր...

Սերգոն ընդհատեց նրան.

- Կեցի՛ր, էսօր դուն իրավունք չունիս խոսելու... Մի մոռանա, քու նշանվելու օրն է... Մենք պիտի խոսինք:

- Չէ՛, չէ... Դուք էլ մոռացեք բուրժուական սովորությունները եւ հիշեք, որ ես ձեր կուսակցական ղեկավարն եմ:

- Համաձայն եմ, - ասաց Սաղաթելը, որն այսօր առանց էնկեվեդեի իր համագգետով էր:

- Հըբը՛... - շեշտը դրեց Մուկուչը՝ կատակով ընդգծելով իր անհամաձայնությունը:

- Կեցի՛, կուսակցական ղեկավար... - բաժակը բարձրացնելով արտաբերեց Սիմոնը: - Էսօր մենք պիտի ղեկավարենք, ուզես, թե չուզես... - եւ դառավ Շուշանին. - Ի՞նչ կըսես, քուրս...

Շուշանի ներսում բուն էր դնում Հայոց երջանկության ձագուկը. ընտանի՛ք էր կազմվում, ընտանի՛ք... ընտանի՛ք... ընտանի՛ք... Ասես խաղաղ ջրի մակերեսին սահում էր ալիքի մի շերտ... եւ խտտացնում էր, խնդուք առաջաբերում: Շուշանը ընդհանրացած էր, չէր լսում մասնավոր խոսքը, բոլորին մի նախադասության եւ մի տրամադրության մեջ էր ընկալում: Ու երբ

վագոն մտավ խոշորանդամ Վաղինակը եւ ձեռքը տարավ իր ծոցագրպանը, ժայթքեց ջրի մակերեսը: Նրա տեղը տեսավ իր հորը՝ Հակոբին, երբ նա ծոցից հանում էր նապաստակին:

Վաղինակը ծոցից հանեց դուդուկը, դրեց շուրթերին եւ մոտեցավ սեղանին:

- Ըհը՛... առաջին խոսք ըսողը եկավ... - արտաբերեց Մուկուչը, եւ նրա խոսքի վրա հնչեց դուդուկի տխուր նվագը: Չգիտես ինչու՞ տխուր: Ասես դուդուկը Շուշանի հուշի շուրթերին էր: Նրա հնչյունները հետզհետե գծագրելով՝ բացում էին Շուշանի առաջին կործանված ընտանիքի պատկերը:

- Առաջին խոսքդ տխուր էր, ախպար... - Վաղինակի ձեռքը բռնեց Սիմոնը՝ նկատելով Շուշանի հոգեվիճակը:

- Նշանդրեք է, ախր... Ե՞ս պիտի ըսեմ:

- Իսիկ բարեւի տեղն էր, - արդարացավ Վաղինակը: - Մնացածը ետեւեն կուգա: Եվ եկավ. Հայոց երջանկության կենացներն առանց սեթեւեթանքների էին, յուրաքանչյուրի տակ ասողի կենսափորձի ծանրությունն էր, եւ խոսքի տակ գործ կար, հոգս՝ ընկերոջ ապագայի նկատմամբ:

Ստալինի պատկերով շոգեքարշը ամեն օր շտապում էր Շուշանի մոտ. ասես նրա գլխավոր կայանը Շուշանն էր. Արամին մնար՝ վագոնների վրա կգրեր՝ «Մոսկվա-Շուշան»: Հատկապես այսօր գնացքի ընթացքը արագացած էր թվում, կարծես ներդաշնակվել էր ուզում շոգեմեքենավար Արամի տոնական եւ հուզակույտ վիճակի հետ: Ծնվել էր առաջնե՛կը... Շուշանը երեխա էր բերել... Հայոց երջանկությունը անընդհատ սկիզբ ունի... Եվ նրա ներունակությունը երբեք չի նվազում:

Մուկուչը, քարածուխ լցնելով հնոցը, կողքանց նայում էր Արամին եւ, երեւի թե արդեն որերորդ անգամ, հարցրեց, ավելի ճիշտ՝ ոչ թե հարցրեց, այլ մեկ անգամ եւս շեշտել ուզեց Արամի ուրախության պատճառը.

- Տղա՞ է:

- Տղա՞ է, - շոգեքարշի սուլոցի հետ մեկտեղ արտաբերեց Արամը, եւ ասես շոգեքարշը բռռաց.

- Տղաաաա՛....

- Անունը ի՞նչ պիտի դնես... Հորդ անո՞ւնը...

- Չէ... - առանց ետ նայելու ասաց Արամը: - Մե՛լս:

Մուկուչը կամ չլսեց գնացքի աղմուկի մեջ, կամ անհասկանալի էր լսածը.

- Ի՞նչ...

Արամը շրջվեց նրա կողմը.

- Մելս... Կնշանակե՛ Մարքս... Էնգելս... Լենին... Ստալին:

Արամը տարակուսեց.

- Դո՞ւն ես հնարել:

- Ե՞ս... Երեւի:

Շուշանին ու նորածնին ծաղկեփնջերով զարդարված կառքով ծննդատնից բերեցին երկաթուղային դեպո: Տարօրինակ եւ զավեշտալի էր երեւում կառքը վագոնների շրջապատում: Եվ երկրորդ անգամ էլ նույն ձեւով՝ ծաղկազարդ կառքով Շուշանին ու երկրորդ նորածնին բերեցին դեպո: Երրորդին արդեն տուն տարան՝ Լենինականի արվարձանում կառուցված շենքի մեջ:

Հայոց երջանկությունը վերադարձնում էր Շուշանին ընտանիքը: Երկրում նեղվածք էր, նեղվածք էր նաեւ նրա բնակարանում, սակայն դա չխանգարեց

չորրորդին ունենալ... Շոգեքարշը հաշվում էր ուղեծողերի փայտակոճերը համաչափ ընթացող օրերի հետ, ժամանակը սլանում էր, եւ Շուշանի ու Արամի բնակարանում ավելանում էին երեխաները՝ Շուշանի ընտանիքի անդամները, ու մի կերպ տեղավորվում երեսնականների անձկության մեջ: Մի մահճակալի վրա ամուսիններն էին՝ Շուշանն ու Արամը, նրանց արանքում՝ փոքրիկ աղջնակը, մյուս մահճակալին՝ որդիները՝ Սելսն ու Հակոբիկը, թախտի վրա՝ Ֆրունզիկն ու Շչորսիկը, Սեղանին՝ ոտուգլուխ Գոհարն ու Սվետիկը:

Հայոց երջանկությունը անշրջահայաց էր, երբեմն՝ ինքնաբավ, Արամին գերծ էր պահում երկրում ծավալվող ձերբակալություններից: Կոմունիստ շոգեմեքենավարի միտքը հեռու էր երկբայությունից, նա շարունակում էր իր ուղեծողերի վրա մնալ՝ Շուշանի ներսում մլմլող հնից մնացած տազնապների կողքին: Ամուսնու կուսակցական ելույթները ժողովներում թեպետ թեթեւ հովանի էին թվում իր ընտանիքի վրա, սակայն Շուշանի ներգոյը ամուսնուց ավելի տարիքավոր էր իր տխուր փորձով: Եվ նա այդ չարաբաստիկ գիշեր անհանգստացրեց Շուշանին: Շուշանը գլուխը բարձրացրեց սնարից, շուրջը աչք ածեց, հայացքով մեկ-մեկ տնտղեց բոլորին, հետո վերմակը շտկեց ամուսնու վրա եւ, հանգստացնելով իր ներըմբռնողական խլրտումը, նորից գլուխը դրեց բարձին:

Դրսից լսվող ծղրիղի ձայնը գիշերվա անդորրի ճոճանակն էր, որը շեշտակի խախտվեց մեքենայի ոռնոցից:

Շուշանը նորեն գլուխը բարձրացրեց եւ նայեց պատուհանից դուրս:

Պատուհանի առջեւ կանգնեց սեւ «էմադին» ավտոմեքենան, եւ նրա միջից դուրս եկան երեք հոգի. մեկը մնաց մեքենայի մոտ, երկուսը մոտեցան իր դռանը: Դեռ այսքան կոպիտ չէին թակել Շուշանի դուռը: Արթնացավ նաեւ Արամը, արթնացան երեխաները, նայեցին հորն ու մորը... Թակոցը ահագնանում էր...

- Ես կբանամ... - ասաց Արամը:

Շուշանի դեմքն այլափոխվեց, նրա հիշողության մեջ հառնեց մի մեծ, ժանգառք ամայություն:

Արամը բացեց դուռը, եւ ներս խուժեցին մեքենայից իջած երկուսը:

- Ի՞նչի կուշացնես դուռ բանալը... - ասաց նրանցից մեկը: - Պահելու բան ունեի՞ր...

- Ինչի... Քնած էինք, ըշտը... Հագնվիլ պե՞տք էր...

- Ճիշտ կըսես... հագնվիլ պետք էր... Հըմը մենք կաշենք՝ երկար կհագնվեիր...

- Ուր է... Ես, ըշտը, հագնված չեմ... Չհասցրի... - նայելով իր վրա՝ ասաց Արամը: - Ի՞նչ է եղել...

Նրանցից մյուսը աջ ու ձախ տնտղելուց հետո արտաբերեց.

- Հագնվիր... Մեզի հետ պիտի գաս...

- Ո՞ւր... - զարմացավ Արամը:

- Ո՞ւր... - տազնապեց Շուշանը:

- Կհասնինք՝ կիմանաս,- ասաց առաջինը:

- Չե՞ք սխալվի... Ես կուսակցական եմ:

Առաջինի շուրթերին ժպիտ հայտնվեց.

- Դու Արամ Ռոստոմյանը չե՞ս:

- Հա... Ռոստոմյանն եմ:

- Ուրեմն՝ չենք սխալվել... Շո՛ւտ էրա...

Նրանք դուրս տարան Արամին, Շուշանը հետեւեց նրանց: Արամին նստեցրին մեքենան, եւ մեքենան նույն դղրդոցով հեռացավ:

Լսվեց փոքրիկի լացը, Շուշանը վերադարձավ սենյակ, որտեղ երեխաները նստել էին անկողնում ու սեղանի վրա եւ հարցական նայում էին մորը:

- Ո՞ւր տարան հայրիկին... - հարցրեց ավագը՝ Մելսը:

- Կուսակցական գործ կեղներ... - մոտենալով մահճակալի մեջ լացող փոքրիկին՝ ասաց Շուշանը:

- Ինչի՞ կոպիտ կխոսեին... - հարցրեց Ֆրունզիկը:

- Հեջ... Իրենց բնավորությունն է... - առանց հավատալու իր ասածին՝ մրթմրթաց Շուշանը եւ երեխային վերցնելով գիրկը՝ սկսեց օրորել... Իսկ մնացածները քնատ աչքերով սեւեռվել էին մորը:

Դեռ լույսը չբացված՝ Անին՝ երեխան գրկին, կանգնել էր միլիցատան առջեւ:

Ավագ որդին՝ Վիլենը, գնում-գալիս էր նրա առջեւով՝ հաճախակի նայելով պատուհանների մեջ:

- Տուն գնա, Մելս ջան... Ես ամեն ինչ կիմանամ... Դպրոցից չուշանաս:

- Չեմ ուշանա, հլը ժամանակ կա:

- Երեխաները մենակ են... Նայել է պետք... Դո՛ւ ես մեծը:

- Չիմանա՞մ հայրիկի մասին:

- Իմանալու բան չկա... Մենք շուտով հայրիկի հետ տուն կուզանք...

Գնա՛...գնա՛...

Մելսը քոնքոնքալով հեռացավ:

Հեռվում հայտնվեց միլիցիայի լեյտենանտը եւ մոտեցավ Շուշանին.

- Ես մութնուլուսին իստեղ ի՞նչ կենես:

- Գիշերով Արամիս տարան... Իմանամ՝ ի՞նչ է եղել...

Լեյտենանտը շուրջը նայեց եւ մեղմ արտաբերեց.

- Արամը մեր քովը չէ...

- Հըբը ո՞ւր է:

- Ուրիշ տեղ:

- Ուրիշ ի՞նչ տեղ:

Լեյտենանտը մի պահ տատանվեց եւ՝

- Չիդեմ... - եւ շարժվեց դեպի միլիցատուն: Շուշանը հետեւեց նրան:

Լեյտենանտը նորեն ծանրորեն երկբայեց եւ դեռ շատ մեղմ, քնքշորեն, հետզհետե կոշտանալով՝ արտաբերեց.

- Տո՛ւն գնա, քո՛ւրս... Լավ կեղնի՞ դո՛ւն էլ չիմանաս... Տո՛ւն գնա՛:

- Ի՞նչը չիմանամ... Ի՞նչ կըսես... Մա՛րդս է... Հարազատս է... Ի՞նչը չիմանամ:

Լեյտենանտը բացեց միլիցատան դուռը, ներս մտավ եւ ապակու ետեւից ավելացրեց.

- Ըսեցի՞ մեզ մոտ չէ, աղջի՛...

Ուրիշ ո՞ւր կարող էր գնալ Շուշանը: Որտե՞ղ կարող էր փնտրել Արամին: Հիշեց,

որ ամուսնու ընկերներից մեկը՝ Սաղաթելը, «էնկավեդեի» աշխատակից էր:

Հիշեց նաեւ, որ Սաղաթելը իր նշանդրեքի մասնակիցն էր վագոնում: Սա

ջերմացրեց Շուշանին, ավելի քան հուսադրեց, եւ մտածեց՝ ինչո՞ւ առաջուց

միտքը չեկավ, տագնապն ու վախը խառնշտկում են սթափ կողմնորոշումը: Եվ

գնաց-գտավ Լենինականի ներքին գործերի բաժանմունքի շենքը: Ասես

պայմանավորված լինեին, կամ Աստված վերեւից էր հուշում. հիմնարկի դռնից

դուրս էր գալիս Սաղաթելը՝ հիմա այլեւս էնկավեդեի համազգեստով:

- Սաղաթել ախպար... - սրտի ուրախ տրոփյունով մոտեցավ Շուշանը եւ չկարողացավ շարունակել, որովհետեւ Սաղաթելը միանգամից նրա թելքից բռնելով կոպտորեն մի կողմ քաշեց, հեռացրեց շենքի մոտից:

- Խելե՞լ ես... Ի՞նչ կենես... Եկել ես, իմ անունը կուտաս... - ականջի մեջ շշնջալու պես բղավեց Սաղաթելը:

- Հըբը ո՞ւմ քովը երթայի... Դու՛ն Արամիս ընկերն ես... Ի՞նչ եղավ Արամս... Ո՞ւր տարան... Ընչի՞ տարան:

- Դու՛ն իմ տունն է՞լ քանդել կուզես:

- Ընչի՞... Իմ տունը քանդվե՞լ է:

- Թե կուզես, որ չքանդվի՝ մոռացի Արամին:

- Ի՞նչ կըսես... Ի՞նչ կըսես... - այլեւս գազազեց Շուշանը եւ քիչ էր մնում հարձակվել Սաղաթելի վրա: - Դու՛ն նրա ընկերը չե՞ս... Դու ինոր կենացը կխմեիր, ախր... Դու՛ն սո՞ւտ մարդ ես...

- Ես ժողովրդի թշնամու ընկերը չեմ կըրնա եղնիլ... - ձգվելով ու աջ ու ձախ նայելով՝ արտաբերեց Սաղաթելը՝ ասես մի ուրիշի համար:

- Ժողովրդի թշնամի՞... - ապշեց Շուշանը: - Ի՞նչ կըսես... Ի՞նչ կըսես... Դո՞ւն կըսես... Դու՛ն ինոր լավ կճանչես... Դու՛ն... Չե՞ս ամընչե:

Շուշանից ազատվելու այլեւս հնար չունենալով՝ Սաղաթելը, հրելով ավելի հեռացնելով նրան, ասաց.

- Արամն իստեղ չէ... Հասկցի՛ր:

- Ուրտե՞ղ է:

Շուշանին թողնելով շենքից հեռու՝ Սաղաթելը հեռանալով՝ ասես գետնին փռեց խոսքերը.

- Երեւա՛ն... Երեւա՛ն...

Շուշանը գնաց Մուկուչի մոտ:

- Երեւան կուզես՝ կտանիմ, - մխիթարեց Մուկուչը:

- Հա՛, հա՛... Մուկուչ ջան... Արամս ինտեղ է...

- Քեզ պարավոզիս մեջ կտանիմ... Շուտ կեղնի:

Շուշանը տարակուսեց.

- Ընչի՞... Պարավոզը վագոններից շո՞ւտ կերթա:

Մուկուչը փոքր-ինչ շփոթված ժպտաց, բայց պատասխան ուներ.

- Չէ... Հընը առաջինն է, չէ՞...

Մուկուչը Շուշանին տեղավորեց շոգեքարշի խցիկում, եւ Շուշանը միանգամից համակվեց խաղաղ համոզվածությամբ՝ ասես արդեն որեւէ խնդիր այլեւս չկա. Արամը հենց այս շոգեքարշով էլ իր հետ վերադառնալու է: Եվ նրա այդ վիճակը ամրացնում-հաստատում էր շոգեքարշի երիտասարդ ալբինոս հնոցապանը, որն իր աչք կտրող սպիտակաթույր դրսեւորությով ճառագայթում էր սեւ քարածուխի ու մրի մեջ:

Երեւանում Շուշանն ու Մուկուչը երկար փնտրում էին «Էնկեվեդեի» շենքը, վերջապես գտան, հետո փնտրում էին շենքի դուռը, որտեղից կարելի էր ներս մտնել: Գտան զինվորին, դուռը զինվորն էր: «Դուռը» ոչ բացվում էր, ոչ՝ պատասխանում: Շուշանը խնդրում-պաղատում էր, Մուկուչը պտտվում էր Շուշանի չորսբոլորը: Շուշանը տեսնվում էր, նրա լացը՝ լսվում: Եվ դռնից ներս թափանցեց լացը: Լացի ետեւից նաեւ Շուշանը մտավ: Մուկուչը գնում-գալիս էր շենքի առջեւ, հետո հեռանում էր, նորից մոտենում, եւ երբ մութը շաղվեց քաղաքի վրա, գնացքի ետ գնալու ժամանակն էր, Մուկուչը նորեն մոտեցավ

դռանը, սպասեց-սպասեց, անհանգստացավ-սպասեց, զինվորի աչքն էլ հոգնեց:

- Չերի՞ք ֆռռա... - վերջապես խոսեց զինվորը: - Կնիկդ շատ վաղուց գնացել է: Մուկուչը ներքուստ պոռթկաց, բայց նեղացավ հաշտվողական.

- Չէի՞ր կրնա քիչըն շուտ ըսել:

Լռությունը բռունցքներ ունի, ծեծել կարող է, լռությունը թույն ունի, թունավորել կարող է, լռությունը համազգեստ ունի, սարսափեցնել կարող է:

Լռությունը վռնդեց Մուկուչին:

Գնացքի Լենինական վերադառնալու ժամը մոտեցել էր, եւ Մուկուչը կայարանում ու նրա մերձակայքում ոտ ու ձեռ ընկած փնտրում էր Շուշանին:

Եվ գտավ նրան կառամատույցից հեռու պարապուտում՝ քարի վրա կուչ եկած: Մուկուչը նստեց կողքին՝ աչքը գնացքի կողմը:

- Քուրս... Պիտի ետ երթանք... - զգուշավոր արտաբերեց Մուկուչը:

- Արամիս թողնե՞նք... - սղածայն հարցրեց Շուշանը:

- Ուրիշ ի՞նչ կրնանք... Ամեն ինչ էրինք...

- Ամեն ի՞նչ...

- Էլի՞ բան մնաց...

- Արամս:

Մուկուչը համաձայն էր.

- Շիտակ ես... Գլխավորը Արամն է: Ես ճամփա չիղեն... Դուն էլ կրցածդ էրիր...- Մուկուչը լռեց, քիչ անց ոտքի ելավ, քայլեց Անիի առջեւով, հետո նորեն նստեց նրա կողքին ու մասնակցորդի եռանդով հարցրեց.

- Ի՞նչ ըսեցին...

- Չարցրին՝ քանի երեխա ունի Արամը...

- Կտեսնիս... - մխիթարեց Մուկուչը, - ընտանիքիդ մասին կմտածեն...

- Ըսեցին՝ եթե կուզեն ընտանիքս բախտավոր ապրի, պիտի համաձայնվին, թե Արամս ժողովրդի թշնամի է... - ասաց Շուշանը եւ բերանը ձեռքով ծածկեց, որ չփղծկա: - Պիտի հրաժարվի՞մ Արամիցս:

- Սխալվին կը... Շուտով կհասկնան, որ սխալվին կը, բաց կթողնեն...

- Սխալվի՞ն կը... Ընկերներն էլ սխալվին կը... Սաղաթե՞լն էլ սխալվի կը...

Վիլե՞նն էլ սխալվի կը... Կենացներ կըսեին:

- Տեսնիս կը՝ ես չեմ սխալվի... - ասաց Մուկուչը եւ զգուշավոր շուրջը նայեց:

- Ի՞նչ ընեն... Ի՞նչ ընեն... - ծնկները ծեծեց Շուշանը: - Ընտանիքս կկործանվի...

- Չի կործանվի, քուրս... Աշխարհը չլով չի պատած:

- Աշխա՞րհը... հըբը ինչո՞վ է պատած:

Եվ կայարանամերձ պարարուտի շատ հեռվում նորեն երեւաց Շուշանին իր կործանված ընտանիքը՝ կարմիր ժանգառքի մեջ:

- Աստված կա... - ասաց Մուկուչը, - մեզի անտեր չի թողնի... - եւ հեռվում նկատելով իրեն փնտրող ալբինոս օգնականին՝ խնդրողական ձայնով արտաբերեց.

- Երթալ է պետք, քուրս... Պարավոզը մեզի կսպասե:

ճանապարհին Շուշանի տխրությունը նվազեցնելու ցանկությամբ Մուկուչը ինչ-որ բաներ էր պատմում, ալբինոսը դեմքն էր նախշում քարածուխով...

Արամի բացակայությունը մեկը մեկին առել էր Շուշանի կերպարանքը իր շրջագծերի մեջ, բայց մի մեծ իրողության կար, որ լցվում էր, զբաղեցնում այդ բացակայությունը՝ Ընտանիքն էր, ընտանի՞քը... ընտանի՞քը... ընտանի՞քը...

Անին բացեց իր տան դուռը... Երեխաները ուրախ խաղում էին, Մելսի գրկում փոքրիկը լաց էր լինում... Տեսնելով մորը՝ բոլորը սեւեռվեցին նրա կողմը:

- Մա՛... - գանգատվեց հոգնած Մելսը, - վերցրո՛ւ... Մեռա՛... էլ չեմ կրնա...
- Մի՛ մեռնի, տղաս... - վերցնելով փոքրիկին նրա ձեռքից՝ ասաց Շուշանը: - Դեռ ո՛ւր ես, քու երեխային էլ պիտի պահես... Նրա երեխային էլ պիտի պահես...
- Հայրիկն ո՞ւր է... - հարցրեց Ֆրունզիկը:
- Շուտով կուգա... Գործով է գնացել...
- Գործո՞վ... - հարցական տարակուսեց Մելսը:
- Գործո՞վ, Մելս ջան, գործո՞վ... - երեխաների կողմը նայելով՝ արտաբերեց Շուշանը, եւ Մելսը, նույնպես նայելով երեխաների կողմը, հասկացավ մորը: Ինքն էր, որ պիտի փոխարիներ հորը:

Հայոց Երջանկությունը Շուշանին բերեց-հասցրեց 1946 թվական՝ այլեւս հասունացած ընտանիքով՝ Մելսը տասնութ տարեկան էր, կյանք էր մտնում, ընտանիքը մեծացնելու էր, Հակոբիկը, Շչորսը առնականանում էին, աղջիկները լցվում-գեղեցկանում էին... ընտանիքը ապրում էր: Պատերազմից հետո կյանքը դժվար էր. հացը՝ դժվարության չափանիշը, ընտանիքի կենտրոնում էր, եւ ամեն մեկը յուրովսանն օգնում էր ընտանիքի մորը՝ Շուշանին: Իսկ հիմնական բեռը նրա ուսերին էր. աշխատում էր որպէս վագոնի ուղեկցորդ «Թբիլիսի-Երեւան» գնացքում: Եվ ամեն անգամ, անցնելով վագոնների միջանցքներով, առաջանալով դեպի շոգեքարշը, նրա խցիկում պատկերացնում էր Արամին եւ խուսափում էր իրական շոգեմեքենավարին տեսնելուց՝ կռվելով իր ուղեղի հետ՝ պատրանք-պատկերացումը չփոխելու համար: Գլխում գտնվող հայի մի կյանքը անչափելի մեծ էր աշխարհի կյանքից: Նա էր աշխարհը, ուրիշ աշխարհ չկար... Երբ իր վագոնները բերում էին ներգաղթող հայերին, Շուշանի ընկալմամբ նրանք գալիս էին ոչ մի տեղից, գոյություն չունեցող վայրերից... Նրանք շոշափելի էին դառնում միայն այստեղ՝ իր վագոններում, հայոց ռեալ հողի վրա:

Շուշանը ծեծեց կուպեններից մեկի դուռը, ներսից լսվեց՝ «Համեցե՛ք, բա՛ց է», եւ Շուշանը ներս մտավ:

Կուպեում երեք հոգի էին՝ գեղեցկությունը տակավին չկորցրած տարեց մի կին, հասուն տղամարդ եւ բարետես պարմանի: Շուշանը մի պահ անեացավ, որովհետեւ տղամարդը շատ էր հիշեցնում իր հորը:

- Ի՞նչ պատահեց, դուք տագնա՞պ ունիք...- անհանգստացավ տարեց կինը:
- Չէ, չէ... - սթափվեց Շուշանը: - Վերցրե՛ք, իսոնք ձեր անկողնու պարագաներն են... Երեք հատ:
- Շնորհակալություն,- ասաց տիկինը եւ ուշադիր նայեց Շուշանին. - Դեղի կարիք չունի՞ք...
- Չէ...չէ... - ասաց Շուշանը,- շնորհակալ եմ... - հետո ավելացրեց՝ մեկ անգամ եւս աչք ածելով որդուն: - Թեյ կուզե՞ք...
- Թե՛յ... - հարցրեց կինը,- թեյը՝ հետո... Կհաճի՞ք մի քանի վայրկյան նստել քովներս... Խոսել կուզենք Հայաստանի մասին:

Շուշանը նստեց դռան մոտ:

- Բաթումից սկսած, այս երկու օրը տարբեր բաներ կխոսին մեր Հայրենիքի մասին... Դուք ի՞նչ կկարծեք...

- Ի՞նչ...

Կինը հայացք փոխանակեց տղամարդու հետ:

- Այսինքն՝ դուք երջանի՞կ եք Հայաստանում...

Շուշանը փոքր-ինչ ուշացած պատասխանեց.

- Հա... Երջանիկ եմ...

Կինը նորեն, այս անգամ թեթևացած, նայեց տղամարդուն եւ երիտասարդին:

- Սա որդիս է, սա էլ՝ թոռս... Եգիպտոսում մեծ ապագա ունեին... Կուզանք

Հայաստան... Չգիտեմք ինչ կսպասե... Դուք ինչո՞վ եք երջանիկ:

- Ընտանիքով, - արտաբերեց Շուշանը:

Շոգեքարշի կերպարը, որը Շուշանի հուզական պայմանական կառուցվածքի

մեջ Արամի հետ էր նույնանում, եւ՝ հեռու էր պահվում Շուշանի վարանքով՝

չքանդելու համար պատրալից իրականությունը, նաեւ ձգում էր դառնալու

սեփական ու հարազատ : Քանզի շոգեքարշի հոտը Արամի հոտն էր, նրա

խցիկում Արամին կարելի էր զգալ, հոտով լինել նրա կողքին: Եվ, Լենինականի

համար աննախընթաց քայլով, Շուշանը մտավ շոգեքարշ. մտավ ոչ թե որպես

դիտորդ, այլ որպես շոգեմեքենավար: Ամեն ինչից բացի՝ նյութականը այստեղ

բարձր էր, իսկ Շուշանի ընտանիքը բազմանում, փարթամանում էր բոլոր

եզրերով: Այս անգամ Շուշանը Լենինականի ծննդատնից դուրս եկավ՝ Մելսի

նորածինը ձեռքին, որդու երիտասարդ կնոջ՝ Ալվարդի հետ: Նրանց

դիմավորեցին Մելսի ընկերները, իր ընտանիքը... եւ հեռվում կանգնած արդեն

կարգին ճերմակած Մուկուչը՝ ծաղկազարդ կառքի առջեւ:

Հայոց Երջանկությունը ընդունակ էր տեղավորվելու նույնիսկ Շուշանի

նեղվածք բնակարանում: